Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության 2016 թվականին կատարված աշխատանքների մասին

2017-2019 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրագրերի հետ կապված քննարկումներ ենք անցկացրել և կատարել համապատասխան ճշտումներ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի և ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարարության հետ:

2015-2018 թթ. քաղաքաշինության բնագավառում քառամյա զարգացման ծրագրի հաստատման հետ կապված աշխատանքներ ենք տարել մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան վարչությունների հետ:

Աշխատանքներ ենք տարել ՀՀ պետական բյուջեով իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերով իրականացվող օբյեկտների ընտրության, փաստաթղթերի հավաքագրման, համայնք-կազմակերպություն համագործակցության գործում:

I. ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել է՝

Մարզպետարանի պատվիրատվությամբ՝

Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի հետիոտն ճեմուղու վերակառուցում և բարեկարգում- 130.187 մլն. դրամ: Աշխատանքներն ավարտված են :

ՀՀ կառավարության 18.06.2015թ. N 673-ն որոշումով Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի հետիոտն ճեմուղու վերակառուցման և բարեկարգման համար հատկացվել է 157.666 մլն. դրամ: Օբյեկտի նախագծման, տեխնիկական և հեղինակային հսկողության, ինչպես նաև շինարարության իրականացման համար պայմանագրային գումարը կազմել է 153.284 մլն. դրամ, որից 2015թ-ին կատարվել է նախագծային աշխատանքներ՝ 1.98 մլն. դրամ և շինարարական աշխատանքներ՝ 20.83 մլն. դրամի: Համաձայն պայմանագրի օբյեկտի շինարարության ավարտման վերջնաժմկետ էր սահմանվել մինչև 2015թ-ի դեկտեմբերի 25-ը:

ՀՀ կառավարության 24.12.2015թ. N 1548-Ա որոշումով կատարվել է պայմանագրային ժամկետի փոփոխություն և աշխատանքների կատարման ու ծառայությունների մատուցման վերջնաժմկետ է սահմանվել մինչև 2016թ-ի օգոստոսի 1-ը: Սակայն «Նոր Էներջի» ՍՊԸ կապալառու կազմակերպության կողմից աշխատանքներն ավարտվել են 2016թ-ի հոկտեմբերի 31-ին, որի համար կապալառու կազմակերպության նկատմամբ կիրառվել է տույժ, յուրաքանչյուր ուշացած օրվա չկատարված աշխատանքների գնի 0.05 %-ի չափով, որը կազմում է 2.637 մլն դրամ:

Վայքի քաղաքապետարանի պատվիրատվությամբ՝

Վայք քաղաքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգում - 60.0 մլն. դրամ:

1. Մարզադաշտին կից այգու բարեկարգում - 60.0 մլն. դրամ:

Ընդամենը – 250.187 մլն. դրամ:

II. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով իրականացվել է՝

2. Մալիշկա համայնքի գազաֆիկացման ընդլայնում- 55.0 մլն. դրամ:

3. Արենի համայնքի ներտնտեսային ցանցի ոռոգման ջրագծի վերակառուցում L=3.83 կմ - 74.23 մլն. դրամ:
4. Վերնաշեն համայնքի ներքին ցանցի ոռոգման ջրագծի վերակառուցում L=0.43 կմ - 31.300 մլն. դրամ:
5. Գետափ համայնքի ներքին և արտաքին ցանցի ոռոգման ջրագծի վերակառուցում L=3.0 կմ - 95.27 մլն. դրամ:
6. Ելփին համայնքի ներտնտեսային ցանցի ոռոգման ջրագծի վերակառուցում L=1.770 կմ - 76.500 մլն. դրամ:
7. Արին համայնքի ոռոգման ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում L=6.17 կմ - 99.400 մլն. դրամ:
8. Ազատեկ համայնքի ոռոգման ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում L=6.17 կմ - 190.030 մլն. դրամ:
9. Ազատեկ համայնքի խմելու ջրագծի արտաքին և ներքին ցանցերի վերանորոգում – 288.5 մլն. դրամ (ընթացքի մեջ է): 2016թ. ընթացքում կատարվել է 187.5 մլն. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ:
10. Ռինդ համայնքի խմելու ջրագծի արտաքին և ներքին ցանցերի կառուցում L=13.5 կմ - 310.62 մլն. դրամ:
11. Ռինդ համայնքի ոռոգման ներտնտեսային ջրագծի կառուցում L=2.0 կմ - 38.0 մլն. դրամ:

12. Հերհեր համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում L=11.8 կմ - 336.0 մլն. դրամ:
13. Գոմք համայնքի խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում L=3.05 կմ- 64.0 մլն. դրամ:

Ընդամենը – 1557.85 մլն. դրամ:

III. Գյուղ նախարարության ԾԻԳ ՊՀ-ի միջոցներով իրականացվել է՝

1. Աղնջաձոր համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 42.400 մլն. դրամ : (L=1.6կմ խմելու ջրի արտաքին ջրագծի կառուցում, 2 խմոցի և փարախի կառուցում) :
2. Ռինդ համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 64.0մլն. դրամ: (L=1 կմ հանդամիջյան ճանապարհի, հովվի տնակի, խմոցների և փարախի կառուցում) :
3. Վերնաշեն համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 28.6 մլն. դրամ : (1 կմ հանդամիջյան ճանապարհի բարեկարգում, 0.2 կմ նոր ջրագծի կառուցում, 3 խմոցի և 1 փարախի կառուցում) :
4. Սարավան համայնքի արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում- 38.9 մլն. դրամ : (0.7 կմ հանդամիջյան ճանապարհի բարեկարգում, 0.15 կմ նոր ջրագծի կառուցում, 3 խմոցի և 1 փարախի կառուցում) :

Ընդամենը – 173.9 մլն. դրամ:

IV. «Վերջին օրերի սրբեր» բարեգործական կորպորացիայի միջոցներով իրականացվել է՝

1. Ռինդ համայնքի նոր թաղամասի խմելու ջրագծի ներքին ցանցի 1.8 կմ հատվածի վերանորոգում- 6.396 մլն. դրամ:
2. Խնձորուտ համայնքի խմելու ջրագծի ներքին ցանցի վերանորոգում- 3.956 մլն. դրամ:

Ընդամենը – 10.352 մլն. դրամ:

V. «Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի միջոցներով իրականացվել է՝

1. Շատին համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 14.01 մլն. դրամ:
2. Թառաթումբ համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 9.131 մլն. դրամ:
3. Հորս համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 9.144 մլն. դրամ:
4. Քարագլուխ համայնքի արոտավայրերում խմոցի տեղադրում- 12.57 մլն. դրամ:
5. Գնդևազ համայնքում կաթի հավաքման կետ – 14.323 մլն. դրամ: (Օրական 2 տոննա կաթի ընդունում, կոպերատիվի ենթակայություն) :
6. Մարտիրոս համայնքի արոտավայրերում «Արաքսի ազբյուր», «Սալեր», «Կնյազի աղբյուր», «Խարաբաներ» անասունների ջրախմոցների կառուցում – 11.337 մլն. դրամ:
7. Սերս համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 7.661 մլն. դրամ:
8. Գոմք համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 8.846 մլն. դրամ:
9. Զառիթափ համայնքում կաթի հավաքման կետի լրացուցիչ աշխատանքներ – 6.5 մլն. դրամ: (Օրական 2 տ կաթի մթերում, կոպերատիվի ենթակայության) :
10. Կեչուտ համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 9.778 մլն. դրամ:
11. Սարավան համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 8.644 մլն. դրամ:
12. Արտավան համայնքում անասունների ջրախմոցների կառուցում – 12.39 մլն. դրամ:
13. Չիվա համայնքում 2 հաց և կացեր – 7.458 մլն. դրամ: (Հյուրընկալության համար 2 բնակարանի բարեկարգում, հյուրատներ) :
14. Աղավնաձոր համայնքում ոռոգման ջրագծի արտաքին ցանցի կառուցում L=1.2 կմ– 20.570 մլն. դրամ:
15. Աղավնաձոր համայնքում չրի արտադրամասի կառուցում – 4.984 մլն. դրամ: (Կոպերատիվի ենթակայության):
16. Ռինդ համայնքում մրգի սառնարանի կառուցում – 15.0 մլն. դրամ (30 տ-ի համար կոպերատիվի ենթակայություն):

Ընդամենը – 172.346 մլն. դրամ:

VI. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել է՝

1. Զառիթափ համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում- 145.0 մլն. դրամ:
   Ընդամենը – 145.0 մլն. դրամ:

VII. Համայնքային բյուջեի միջոցներով իրականացվել է՝

1. Գնդևազ համայնքում ոռոգման ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում L=2.5 կմ - 120.5 մլն. դրամ:
2. Գոմք համայնքի անասունների համար բակատեղերի կառուցում – 1.86 մլն. դրամ:
3. Գետափ համայնքում հենապատի կառուցում – 0.96 մլն. դրամ:
4. Գետափ համայնքում գազիֆիկացման ընդլայնում – 2.3 մլն. դրամ:
   Ընդամենը – 125.62 մլն. դրամ:

VIII. Բնության համաշխարային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի միջոցներով իրականացվել է՝

1. Եղեգնաձոր քաղաքի այցելությունների կենտրոնի կառուցում – 32.447 մլն. դրամ:

2. Գետափ համայնքում մրգի արևային չորանոցի կառուցում – 20.0 մլն. դրամ:
   Ընդամենը – 52.447 մլն. դրամ:

IX. «ՕՔՍՖԱՄ» - ի միջոցներով

1. Գնիշիկ համայնքում ոռոգման ջրագծի արտաքին և ներքին ցանցի կառուցում L=2.8 կմ – 18.0 մլն. դրամ:
   Ընդամենը – 18.0 մլն. դրամ:

X. Ասիական զարգացման բանկի միջոցներով իրականացվել է՝

1. Ջերմուկ քաղաքի ներտնտեսային ջրամատակարարման բարելավման աշխատանքները – 31.0 մլն. դրամ:
2. Զառիթափ գյուղի ներտնտեսային ջրամատակարարման բարելավման աշխատանքները – 36.5 մլն. դրամ:
   Ընդամենը – 67.5 մլն. դրամ:

XI. «Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի» Արմենիա հիմնադրամի միջոցներով իրականացվում է՝

1. Վայք քաղաքի 5 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարելավման միջոցառումների իրականացում – 89.984 մլն. դրամ, որից 2016թ. կատարվել է 22.419 մլն դրամի աշխատանքներ: (Աշխատանքներն ընթացքի մեջ են):

   Ընդամենը 22.419 մլն. դրամ:

XII. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներով իրականացվել է՝

1. Բարձրունի համայնքում 81 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի կառուցում – 20.408 մլն. դրամ:
2. Գնիշիկ համայնքում 8 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի և խմելու ջրի նոր ներքին ցանցի L=2.1 կմ կառուցում – 13.998 մլն. դրամ:
3. Մոզրով համայնքում 29 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի կառուցում – 7.250 մլն. դրամ:
4. Գոմք համայնքում 37 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի կառուցում – 9.524 մլն. դրամ:
5. Խնձորուտ համայնքում 94 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի կառուցում – 23.376 մլն. դրամ:
6. Մարտիրոս համայնքում 52 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի կառուցում – 13.016 մլն. դրամ:
7. Հորբատեղ համայնքում 65 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի կառուցում – 15.803 մլն. դրամ:
8. Նոր Ազնաբերդ համայնքում 60 լուսադիոդային լուսարձակով փողոցային լուսավորության համակարգի կառուցում – 15.023 մլն. դրամ:

Ընդամենը 118.402 մլն. դրամ:

Ընդամենը մարզում – 2714.023 մլն. դրամ:

<u>Ճարտարապետության բնագավառ</u>

2016 թվականին աշխատանքներ է տարվել մարզի բնակավայրերի պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման ուղղությամբ:

Սարավան համայնքի նախագծային առաջադրանքը, ելակետային նյութերի ցանկը և ավագանու որոշումը ուղղարկվել է ՀՀ քաղաքաշինության

նախարարություն, իսկ Գնդևազ համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի պատվիրման համար պահանջվող փաստաթղթերը մշակման փուլում են:

2016 թվականին հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 19-ի N 12-ն և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. դեկտեմբերի 4-ի N 371-ն համատեղ հրամանը վարչական հսկողություն է իրականացվել մարզի 3 քաղաքներում և 12 գյուղական համայնքնրում, իսկ հունիսի առաջին շաբաթվա ընթացքում մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությունում տեսչական ստուգումներ է իրականացվել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության կողմից:

Քաղաքաշինության վարչությունը աջակցում և աշխատանքներ է տանում վարչական հսկողությամբ համայնքներում հայտնաբերված բացթողումները շտկելու և ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված գործառույթները կատարելու ուղղությամբ:

Մեկ տարվա ընթացքում գյուղական բնակավայրերում անհատական բնակելի տների կառուցման նպատակով տրվել է 8 հատ բազմակի օգտագործման համար նախատեսված բնակելի տների նախագիծ 2 հատ ջերմոցային տնտեսության նախագիծ:

Նշված ժամանակահատվածում քաղաքաշինության պետական տեսչության Վայոց ձորի մարզային բաժնից ստացվել է թվով 4 ԱԿՏ, իսկ համայնքներից ստացվել է շինարարության 52-ը և քանդման 4 թույլտվություն:

ՈՒսումնասիրվել է թվով 8 մանկապարտեզների կողմից զբաղեցրած շինությունների տեխնիկական վիճակը և հայտնաբերված թերությունների ուսումնասիրության հետևանքով առաջարկվել է լուծումներ:

Բոլոր համայնքներին պարբերաբար տեղեկացվել է քաղաքաշինության բնագավառում օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների մասին և ուսումնասիրվել է համայնքներում կայացված որոշումների (քաղաքաշինության բնագավառում) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

2016 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներում կատարված փոփոխությունները թվով 7-ը ուսումնասիրվել և եզրակացությունը ուղարկվել է համապատասխան կառույցներին: Քննարկվել և հավանության է արժանացել շինարարության ոլորտի բարեփոխումների մասին ծրագիրը, ինչպես նաև աշխատանքներ է տարվել տարածքային զարգացման հիմնադրամի հետ:

Ինքնակամ շինարարության և քաղաքաշինության բնագավառի վիճաբանության վերաբերյալ ստացվել է 8 հատ դիմում բոլորն էլ ուսումնասիրվել և պատասխանվել է:

Հողի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ ստացվել է 5 առաջարկություն, որոնց համապատասխան ընթացք է տրվել:

Մարզի համայնքներին է տրամադրվել և պարզաբանվել <<հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքը և կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի № 1910-Ն որոշումը և աշխատանքներ է տարվում առկա գերեզմանատների տարածքների օգտագործման և պահպանման ուղղությամբ:

Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

2016թ-ի ընթացքում շարունակվել է ՀՀ կառավարությանն առընթեր «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի հետ համագործակցությունը, որի արդյունքում ավարտվել է Մալիշկա համայնքի գազիֆիկացման ընդլայնման աշխատանքները:

Նույն ծրագրի շրջանակներում իրականացվել և ավարտվել են Արենի,Գոմք, Հեր-Հեր, Վերնաշեն, Գետափ, Ելփին, Արին, Ազատեկ, Ռինդ խմելու ջրի և ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքները, բացառությամբ Ազատեկ համայնքի խմելու ջրագծի արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքները, որը ընթացքի մեջ է և աշխատանքների ավարտը նախատեսված է 2017թ-ի հունիսին:

Ծրագրերի շարունակությունը ապահովելու համար դիմել ենք համայնքների ղեկավարներին համաֆինանսավորման համար կայացնել համապատասխան որոշումներ, որոնք ներկայացվել են ՀՀԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի տնօրինությանը:

ՈՒսումնասիրվել և քննարկվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից բնակչությանը տրվող խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքները:

Առաջարկել և ապահովել ենք համայքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար պայմանագրեր կնքել ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի հետ:

2016թ-ի ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային տարածքային մասնաճյուղի կողմից նախատեսված 212543.92 հազ. դրամից հավաքագրվել է 205998.93 հազ. դրամ, որը կազմում է 96.9%-ը:

Վայոց ձորի մարզը ունի 44 համայնք, որից 3 քաղաքային, 41 գյուղական : Ներկա դրությամբ այդ 44 համայնքից գազաֆիկացված է 16 համայնք, որից 3 քաղաքային, 13 գյուղական : Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված համայնքների գազամատակարարումը : Գազաֆիկացման առկայությունը կնպաստի անտառների, էկոլոգիայի և դրանից բխող պռոբլեմների լուծմանը : Իրան Հայաստան գազամուղի շինարարության արդյունքում հնարավորություն է ստեղծվել հարակից գյուղերի գազաֆիկացման աշխատանքներն իրականացնելու համար :

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը 2016թ-ին ավելացել է 70-ով, որից 23 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 47 անհատական տներ: Անվտանգության ապահովման համար տեղադրվել է 70 անվտանգության համակարգ:

Մարզում առկա է 3 աղբավայր : Քաղաքներում աղբահանությունը կատարվում է կենտրոնացված ճանապարհով հատուկ մասնագիտական ընկերությունների կողմից, իսկ Արփի, Գետափ, Մալիշկա, Շատին, Վարդահովիտ և Վերնաշեն համայնքներում մասնակի : Մարզում կոմունալ ծառայությունների համար նախատեսված 66012.4 հազ. դրամից հավաքագրվել է 69367.34 հազ. դրամը, որը կազմում է 105.1%-ը:

Մարզի 3 քաղաքային և 41 գյուղական համայնքների ղեկավարների հետ համագործակցելով հավաքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնք պարբերաբար թարմացվում են:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ